

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 243-Ա

11 օգոստոսի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1820-Ա, N 1821-Ա, N 1822-Ա, 2020 թվականի հուլիսի 17-ի N 1878-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 7-8-ին և 10-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Սեդա Հովհաննիսյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 16 շենք բն. 31.
  - 2) «ԳԷԳ» ՍՊԸ՝ ք. Երևան, Շինարարների փողոց 15/12.
  - 3) «Հովհաննես Ղազարյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Սեբաստիա 8/6.
  - 4) «Գոռ Համբարձումյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Շինարարների փողոց 15/11.
  - 5) «Վլադիմիր Միրանյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Միքայելյան 18:
2. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) կողմից անձանց ընդունելությունը.
  - 1) «Արգամ Քարամյան» Ա/Ձ՝ Սևանի գրողների միության հանգստյան տուն.
  - 2) «Գրիգ Տուր-1» ՍՊԸ՝ Սևանի թերակղզի.
  - 3) «Համամ» ՍՊԸ՝ Սևան, Երևանյան խճուղի 88.
  - 4) «Գոհար Միրաքյան» Ա/Ձ՝ ք. Սևան, «Ծովորորի» հանրային լողափի հարևանությամբ.
  - 5) «Ռոման Դավթյան» Ա/Ձ՝ Սևանի թերակղզու հարևանությամբ.
  - 6) «Մեր Սիր» ՍՊԸ՝ Սևանի թերակղզի.
  - 7) «Մերպո» ՍՊԸ՝ Սևան-Դիլիջան 7-րդ կիլոմետր.

8) «Էդգար և Խորեն» ՍՊԸ՝ Երևանյան խճուղի 67:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-2րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 11/08/20 19:00:43 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**